



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԶԱՅԱՆԱՅԻՑ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

**ԱՐԹՆՈՒԹԻՒՆԸ, ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ, ՊԱՏՐԱՍԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ  
 ԵՒ ԱՐԴԻՒՆԱԴՈՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՆ  
 ԻՐԱՔԱՆՉԻՐԻՍ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

*Պատգամեց Առաջնորդ Սրբազան Հայրը*

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Երեսփոխանական 35րդ նստաշրջանի նախօրեակին, տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս, Չորեքշաբթի, 16 Մայիս 2007-ին, գումարեց Թեմիս Հոգեւորականաց միօրեայ համագումարը, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի: Համագումարը կը կարեւորուէր այն հանգամանքով եւս, որ առաջին անգամն ըլլալով այն կը գումարուէր Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց համալիրէն ներս:



Առաւօտեան ժամը 10:00-ին, նորակառոյց եւ նորած Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատուռին մէջ տեղի ունեցաւ Առաւօտեան ժամերգութիւն, որուն աւարտին՝ Առաջնորդ Սրբազանը կատարեց հոգեւոր խորհրդածութիւն, որ դարձաւ նաեւ միօրեայ համագումարին Սրբազան Հօր բացման խօսքը:

Առաջնորդ Սրբազանը նախ փառք եւ գոհութիւն յայտնեց ամենաբարին Աստուծոյ, որ Իր Հայրական նախախնամութեամբ, օրհնութեամբ եւ օգնականութեամբ, Ազգ. Առաջնորդարանը արդէն ունի իր գեղակերտ շէնքն ու մատուռը: Ապա Սրբազանը ողջունեց հոգեւորականաց ողջ դասը եւ մաղթեց որ միօրեայ այս համագումարը բոլորիս համար կը դառնայ ինքնաքննութեան եւ վերանորոգութեան սքանչելի առիթ:

Իր խորհրդածութեան համար Առաջնորդ Սրբազանը ընտրած էր Ղուկասու Աւետարանի 12րդ գլխու 35-48 համարները, ուր Յիսուս երկու առակներով կը խօսի հաւատարիմ ծառայի մը պարտաւորութեանց եւ

արթնութեամբ իր պարտականութիւնները կատարելու մասին: Սրբազանը շեշտեց այն, որ մենք յաճախ, որպէս Աստուծոյ եւ Ազգին ծառաներ, աւելի կը փնտռենք դիւրին ու հեշտ գործերը, փախչելով՝ մարտահրաւերներէ եւ դժուարին աշխատանքներէ: Արդարեւ ճշմարիտ հոգեւորականի պարտքն ու պարտականութիւնն է, որպէս խոնարհ ծառայ Զրիստոսի, բոլոր մարտահրաւերները դիմակալել հոգեւոր արթնութեամբ, պատասխանատուութեան խորունկ գիտակցութեամբ եւ անդուլ ու անտրտունջ աշխատանքով: Դիւրին է գեղեցիկ գաղափարներու մասին ճառելը, կարելորը, սակայն՝ զանոնք գործադրելն է, յանձնառու ըլլալով՝ դիմակալելու ամէն տեսակի դժուարութիւն եւ նեղութիւն: Մենք պետք ունինք վերանորոգուելու, հաւատքով աւելի զօրանալու, որպէսզի Աստուծոյ մեզի յանձնած գործը իր լրումին հասցնենք: Առ այդ՝ կարելոր է նոր մեթոտներով եւ ժամանակին հետ զարգացման քայլեր պահելով առաջնորդել հոգեւորականի մեր կեանքն ու բոլոր աշխատանքները:

Ապա Սրբազանը մեջբերելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երեց հանգուցեալ միաբաններէն, երանաշնորհ Չարեհ Արք. Ազնաւորեանի «Լոյս եւ Հաղորդութիւն» գիրքի եւ համանուն յօդուածէն զանազան հատուածներ, յատկապէս բոլոր հոգեւորականներուն ուշադրութիւնը հրաւիրեց յօդուածի վերջին պարբերութեան վրայ, ուր լուսահոգի Սրբազանը կը գրէ. «Արդ, որպէսզի այս կեանքին մէջ չըլլանք պարզապէս կոյր անցորդներ, դէպքերու հոսանքին հետ քշուող աննպատակ գոյութիւն մը, այլ կարենանք գիտակից կերպով առաջնորդել մենք զմեզ եւ գիտակցօրէն ապրիլ Զրիստոսի ապրած ու թելադրած կեանքը, դարձնենք մեր հոգւոյ աչքերը դէպի ճշմարիտ լոյսը՝ պայծառակերպուած Լոյս-Փրկիչը, դնենք մեր կեանքը Աստուծոյ լոյսին մէջ եւ Աստուծոյ աչքին ներքեւ, որպէսզի միշտ լուսոյ մէջէն քալենք եւ լեցուած Աստուածային սիրոյ եւ եղբայրութեան անկեղծ զգացումներով, ապրինք քրիստոնէական իրա՛ւ կեանքը եւ այժմէն իսկ այս աշխարհի վրայ իրագործենք հոգեւոր արքայութիւնը, ի փառս Ամենասուրբ Երրորդութեան եւ ի պայծառութիւն Զրիստոսի Սուրբ Եկեղեցւոյն. Ամէն»:

## **ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

Հոգեւորականաց միօրեայ համագումարը տեղի ունեցաւ նորակառոյց Առաջնորդարանիս Ժողովասրահէն ներս:

Ա. նիստը սկսաւ ժամը 11:30-ին: Առաջնորդ Սրբազան Հօր առաջնորդութեամբ նիստը բացուեցաւ Տէրունական աղօթքով եւ «Իմաստութիւն Հօր, Յիսուս» մաղթանքով: Սրբազանը անգամ մը եւս ողջունեց հոգեւորականաց ողջ դասը, բարձր գնահատեց Թեմէս ներս յատկապէս վերջին երկու տարիներուն Հայր Սուրբերուն եւ Հոգեւոր Հովիւներուն կողմէ տարուած հոգեւոր աշխատանքները, կոչ ուղղելով սակայն բոլորին՝ աւելիին ձգտելու եւ աւելին կատարելու: Սրբազանը յաջողութիւն մաղթեց այս եւ գալիք օրերու ժողովական աշխատանքներուն:

Հոգեւորականաց Համագումարի Դիւան ընտրուեցաւ Կրօնական Ժողովի Դիւանը՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան՝ ատենապետ, եւ Արժ.

Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան՝ ատենադպիր: Ընթերցուեցաւ եւ քննարկուեցաւ Կրօնական Ժողովի միամեայ տեղեկագիրը: Պատրաստուեցաւ Կրօնական Ժողովին կողմէ Ազգ. Երեսփոխանական 35րդ Ժողովին ներկայացուելիք միացեալ առաջարկները՝ հոգեւոր մարզէ ներս:

Համագումարի ընթացքին օգտաշատ եւ յոյժ հետաքրքրական դասախօսութիւն մը ներկայացուց Արժ. Տ. Խորէն Ա. Զինյ. Հապէշեան, զեկուցելով «Դիակիզում» նիւթին մասին: Տէր Հայրը, իր դասախօսութեան առաջին բաժնով, անդրադարձաւ հին կրօնքներու եւ տարբեր ազգերու կեանքին մաս կազմող թաղմանական զանազան սովորութիւններուն մասին, բացատրելով թէ ինչպէս անկենդան մարմնին նկատմամբ վերաբերմունքի տարբեր կերպեր ու արարողութիւններ եղած են շատ հեռաւոր անցեալէն մինչեւ այսօր: Իսկ երկրորդ բաժնով, արժանապատիւ դասախօսը խօսեցաւ դիակիզման մասին, զայն ուսումնասիրելով՝ կեանքի եւ մահուան նկատմամբ ցոյց տրուած մարդկային հակազդեցութեանց լոյսին տակ, առանց սակայն եզրահանգումներու հասնելու, այլ անով՝ ապագային պարզապէս դիւրացնելու համար պատկան մարմիններու կամ ժողովականութիւններուն կողմէ առնուելիք որոշումներուն ընթացքը, նկատի առնելով այն հանգամանքը, որ Արեւմուտքի ընկերային կարգ ու սարքի եւ մշակոյթի ազդեցութեան տակ՝ դիահրկիզումը սկսած է զգացնել եւ, նոյնիսկ, պարտադրել ինքզինք՝ Հայ իրականութենէն ներս:

Ա. Նիստէն ետք տեղի ունեցաւ հաւաքական ճաշ:

Բ. Նիստը սկսաւ ժամը 3:00-ին եւ շարունակուեցաւ մինչեւ 6:30: Այս նիստի առաջին բաժնով, Առաջնորդ Սրբազան Հայրը զեկուցեց անցնող Ղեւոնդեանց տօնին կազմակերպուած Հոգեւորականաց եռօրեայ համագումարի ընթացքին յարուցուած ծիսական եւ այլ հարցերու մասին, առնչուած՝ Սկրտութեան, Ս. Հաղորդութեան, Պսակի, Թաղմանական կարգի, Ձեռնադրութեան եւ այլ կարեւոր հարցերու, որոնց ոգին պահելով հանդերձ՝ անոնց պէտք է տալ նոր շունչ ու ոգի, նկատի առնելով այսօրուան իրականութիւնն ու տեղական պայմանները: Անոնք յետագային պիտի վերջնական իրենց ձեւին մէջ հրատարակուին եւ գործադրութեան դրուին Արեւմտեան մեր երեք Թեմերէն ներս:



Երկրորդ բաժնով քննարկուեցան Ազգ. Երեսփոխանական Ժողովին ներկայացուելիք հարցեր, յառաջիկայ տօնական օրերուն առթիւ կատարուելիք եկեղեցական արարողութիւնները: Խօսուեցաւ Վեհափառ Հօր կողմէ «Հայ Լեզուի Տարուան» հռչակման առիթով յառաջիկային կայանալիք ձեռնարկներուն մասին, ինչպէս նաեւ խօսուեցան չնախատեսուած հարցերու մասին՝ կատարելով առաջարկներ:

Համագումարի ավարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը բարձրօրէն գնահատեց Թեմէն ներս տարուած հոգեւոր դաստիարակչական

աշխատանքը, անգամ մը եւս շեշտելով՝ որ անելիին պիտի ձգտինք ու անելին պիտի իրագործենք յաջորդ տարի:

«Աշակերտք Քրիստոսի» շարականին միասնական երգեցողութեամբ եւ Առաջնորդ Սրբազան Զօր «Պահպանիչ»ով՝ Զոգելորականաց միօրեայ համագումարը իր լրումին հասաւ:

Պ.Վ.Կ.

AT THE WESTERN PRELACY CLERGY CONFERENCE

**THE FOUNDATION OF OUR MISSION SHOULD BE  
ALERTNESS, LOYALTY, READINESS, AND FRUITFUL SERVICE**

*DECLARED THE PRELATE*

In keeping with tradition, each year prior to the National Representative Assembly a clergy conference takes place, which convened this year on Wednesday, may 16, 2007, at the hall of the new Prelacy building.

The conference began at 10:00 a.m. with sunrise service at the St. Dertad and St. Ashkhen Chapel, following which the conference began with opening remarks of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, in which he gave thanks to God for His blessings and guidance and conveyed his wishes for the conference to afford the opportunity for introspection and renewal.

The Prelate had chosen as his theme a passage from Chapter 12 of the Gospel of Luke in which Christ speaks of the obligation of servants to be alert



and to carry out their duties faithfully. The Prelate stated that often times we avoid challenges and hard work and seek the easy path instead. However, as humble servants of Christ, we must be spiritually alert and ready to face all challenges and successfully complete what God requires of us with strong and renewed faith.

The first session of the conference commenced with the Lord's Prayer. During the session the annual report of the Religious Council was read and analyzed and suggestions were made to be presented to delegates at the 35<sup>th</sup> Assembly. In his lecture on cremation, Archpriest Rev. Khoren Habeshian first spoke of the burial rituals of different religions, then

spoke of cremation specifically taking into consideration that it is slowly becoming an issue for Armenians living in the Western world.

After lunch, the second session commenced during which the Prelate spoke of issues that arose from the three-day Ghevontians clergy conference regarding the modification of the rituals of Baptism, Communion, Marriage, Burial, and Ordination to correspond with the present day. In the second part of the session, clergy members discussed concerns to present to the Assembly and church services related to upcoming religious feasts. The session also discussed upcoming events to celebrate "The Year of the Armenian Language" which H.H. Catholicos Aram I declared 2007 to be.

The conference came to a close with the benediction by the Prelate.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.